№ 27 — ԱՊՐԻԼԻ 21 (ՄԱՅԻՍԻ 3) — 1877 — ԱՊՐԻԼԻ 21 (ՄԱՅԻՍԻ 3) — № 27

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 7 ռուբլ, կէս տարվանը 4 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Ծատուրեանի և Արասխանեանի խանութում

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի *Тифлисъ. Редакція „Мшака“*

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 (Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսի և Ասիայի հայերը։ — Ներքին տեսութիւն. Պատերազմական բեմից։ Մեր լրագիրների թղթակիցներին։ «Խաթաբալա» վրացերէն։ Նամակ Երևանից։ Ներքին լուրեր։ — Արտաքին տեսութիւն։ Թիւրքիա։ Արտաքին լուրեր։ — Խառն լուրեր։ — Ցայտարարութիւններ։ — Տեղեկացոյց։ — Բանասիրական. Նամակներ իմ բարեկամին։

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՄԱՆԻՖԵՍՏ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, *ապրիլի 12-ին։* Բարձրագոյն Մանիֆէստի խօսքերը։ «Մինչև վերջը սպառելով Մեր խաղաղասիրութիւնը, Մենք ստիպված ենք Բ. Դրան ինքնահաւան կամակորութենից աւելի վճռողական գործողութեան։ Թիւրքիան իր մերժումով դնում է Մեզ անհրաժեշտութեան մէջ դիմել զէնքի ոյժին։ Կանչելով մեր քաջ զօրքերի վրա Աստուծու օրհնութիւնը, Մենք հրամայել ենք նրանց մտնել Թիւրքիայի սահմանները։»

ՀՐԱՄԱՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԻՆ

Ապրիլի 12-ին 1877 թ. Թիֆլիս

Կովկասեան բանակի զինուորներ։

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՑՍԲԻ ինքնակալ կամքը հրաւիրում է այժմ ձեզ զէնքով պաշտպանելու մեր Հայրենիքի պատիւը և արժանաւորութիւնը։ Ձեր ետևն է Կովկասեան զօրքի փառաւոր անցեալը,—ձեր առաջն են ձեր հայրերի և եղբայրների արիւնով թաթաւած դաշտերը և ամուր տեղերը։

Առաջ. Տէրը ձեզ հետ է Հայրենիքի և մեծ Թագաւորի համար։

Խակականը ստորագրված է՝ Գլխաւոր հրամանատար Կովկասեան բանակի, Գեներալ—ֆէլդցեյխմեյստեր ՄԻԽԱՅԷԼ

Կ. ՊՕԼՍԻ ԵՒ ԱՍԻԱՅԻ ՀԱՅԵՐԸ

Եթէ համեմատենք Կ. Պօլսի և Ասիայի, այսինքն բուն Հայաստանի հայերին, կը տեսնենք որ հայերի այդ երկու մասերը պատմութեան ընթացքում միմեանցից բոլորովին անկախ են զարգացել և չունէին միմեանց մէջ ոչինչ բարոյական կապ։

Կ. Պօլսի հայերի նպատակն էր հարստանալ, հասնել պետական նշանաւոր պաշտօններին, ապրել իրանց համար, առանց մտածելու իրանց ասիական ողորմելի եղբայրների վրա։

Կ. Պօլսի հայերի դէվիզը՝ եսականութիւն էր, և եթէ ժամանակ առ ժամանակ նոքա ունէին էլ որ և է յարաբերութիւն Ասիայի հայերի հետ,—նոքա կապում էին այդ յարաբերութիւնները ոչ թէ իրանց ասիական հայրենակիցներին որ և է օգնութիւն տալու, նրանց մտաւորապէս, կամ տնտեսական կողմից զարգացնելու համար,—այլ ընդհակառակն նայում էին նրանց վրա ինչպէս կաթնատու կենդանիների վրա, հարստահարում էին նրանց, և իրանք հարստանում էին ի վնաս իրանց ողորմելի եղբայրների....

Այս էր Կ. Պօլսի եսական բուրժուա հայերի ազգասիրութիւնը։ Այն երևելի սահմանադրութիւնն էլ, որ վայելում էին Կ. Պօլսի հայերը, ոչինչ նշանակութիւն չունէր գաւառների հայերի համար։ Սահմանադրութիւնը անզօր էր պաշտպանել նրանց թիւրքերի և քուրդերի հարստահարութեան և ճնշման դէմ.... Մինչև որ Կ. Պօլսի հայերը հարստանում էին, հասնում էին պետական բարձր աստիճաններին ու փառքին, միջոց ունէին ստանալ կրթութիւն թէ Թիւրքիայի մայրաքաղաքի ուսումնարանների մէջ, թէ օտար երկիրներում,- գաւառների բազմաթիւ հայերը, քանի գնում էին աղքատանում էին, ուսումից զուրկ էին մնում, ընկնում էին, գաղթում էին, ոչնչանում էին....

Այսպիսով ոչինչ համերաշխութիւն չը լինելով մայրաքաղաքի և գաւառների ազգայինների մէջ, զարմանալի չէ որ այժմ երբ մի օտար պետութիւն պատերազմ է յայտնել Թիւրքիայի դէմ, Թիւրքաց պետութեան երկու մասերի հայերը տարբեր աչքով են նայում Ռուսաստանի վրա։ Կ. Պօլսի հայերի ինտերէսն է պահանջում ամեն ջանք գործ դնելու Թիւրքիայի պէս թոյլ և անսիստեմական տէրութիւնը պաշտպանելու,—այն ինչ ճնշված, խեղդված Հայաստանցի հայը անհամբերութեամբ է սպասում ռուսաց զօրքերի իր Հայրենիքի մտնելը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ԻՄ ԲԱՐԵԿԱՄԻՆ

—

III *)

Ընկեր,

Այս ինչ լռութիւն է, որ երեք ամիս շարունակ տիրապետելով ինձ, ասես արգելում է իմ քայլերին ազատ շրջել լրագրական դաշտում։

Եւ իրաւ, 1877 նոր, այս ներկայ տարին եկաւ, լուսացաւ, բերեց իր հետ զանազան՝ քաղցր ու դառը, մութ ու պայծառ օրեր, և ամսական շրջաններ էլ կազմելով թողեց իր ետևից մօտ հարիւր օրուայ յաւիտեան կորած հետք, իսկ ես այդ ժամանակամիջոցում բաւականացայ միայն խորին և կարծես խորհրդաւոր լռութեամբ։ Ոչինչ չը գրեցի լրագրում։

Բայց լռել չէ նշանակում չաշխատել։ Այն մարդը որ չէ աշխատում մեռած է։ Իսկ ես դեռ կենդանի եմ....

Այո, սիրելի ընկեր, ես համարեա թէ մեղաւոր եմ։ Մեղաւոր եմ ոչ թէ միայն քո առջև, այլ և ինձ սիրող ընթերցողների առջև։ Խոստանալ և չը կատարել՝ գրեթէ անազնուութիւն է։ Խոստանալ և չը կարողանալ կատարել ներելի յանցանք է։ Իսկ ես խոստացայ քեզ նամակներ ուղարկել այստեղի կեանքի մասին և ահա չատ դանդաղ եմ գործ տեսնում։

Բայց ինչ գրել, ինչ ասել այս մեր քաղաքի կեանքի մասին։ Մթթէ այստեղ կեանք կայ։ Ես ոչինչ չեմ տեսնում։ Հաւատացիր որ թէև խոստացայ, բայց համարեա անկարելի է նկարագրել այն հասարակական խաօսը, որ մեր աչքի առջև եռ գալով տատանվում է այս ու այն կողմը՝—երեի մահու և կեանքի կողմը։ Այնպէս որ ոչ մեռած կայ, որի վրա լաց լինելով կարողանաս թաղել նորան հողի մէջ ու հանգստանալ, և ոչ կենդանի, որի հետ ապրելով կարողանաս ուրախանալ ու կեանք տեսնել։

Մի պարոն անցեալ օրը խօսելով ինձ հետ չատ իրաւացի կերպով նկատեց ասելով, թէ այո, Եւրոպայում, ուր հասարակական կեանքը ազնիւ կրակով է եփ գալիս, որտեղ իրաքանչիւր քայլափոխում ուշադրութեան ու գրչին արժանի երևոյթներ են պատահում, ուր ապրել նշանակում է զբաղվել ամբողջ հասարակութեամբ, այո, մարդս այնտեղ, ինչ կուզէ լինի, դարձեալ ընդհանուր ցաւի հետ ցաւ կը յայտնէ, հասարակական ուրախութեան հետ կուրախանայ։ Այո, Եւրոպայում, քաղաքակրթուած ու մարդասէր հասարակութեան մէջ մարդս իրաւամբ մարդ է։ Նա այնտեղ ապրում է ամենքի համար, և ամենքն էլ նորա համար են ապրում։ Իսկ ապրել այնտեղ նշանակում է աշխատանքի համեմատ բաղաւոր օրեր ունենալով հասարակութեան առողջ ու օգտակար անդամ լինել։ Ուրեմն և գովելի եռանդով առաջ տանել ընդհանուր նուիրական գործը։—Բայց մեզանում, մեր սառած ու ցամքած, մեր անկիրթ ու անտարբեր հասարակութեան մէջ՝ ընակվել, ապրել՝ հաւասար է մեռնել խօսքին։ Եւ եթէ առաջադէմ կեանքի նախանձողները իրանց ուրախութիւնն ու բաւականութիւնը երբեմն չը գտնեն ընթերցանութեան արժանի գրքերի, ապագայ յոյսի մէջ՝ հաւատացիր որ կը գժվեն։

Ի՞նչ ես կարծում, բարեկամ, չը գիտեմ ինչ կասես, բայց ես համոզուած եմ որ այս խօսող պարոնի ասածը մի անվիճելի ճշմարտութիւն է։ Եւ ինչպէս չը լինի ճշմարտութիւն այն, ինչ որ մարդս իր սեփական աչքերով տեսնում է օրը ցերեկով։

Մթթէ կարելի է ընակվել, ապրել առանց հասարակութեան։ Եւ մթթէ կարելի է ապրել, աշխատել, ոչ թէ միայն խօսել, այլ և գործ տեսնել այսպիսի հասարակութեան մէջ։ Ամեն կողմից հասարակական անտարբերութեան ու անզգայութեան վատ քամին փչում է։ Պէտք է ունենալ մի անկճելի ոգի, մի տաք եռանդ, որ մարդս կարողանայ դիմանալ այս թունաւոր խորշակին։ Եւ կան մարդիկ, որոնք դիմանում են, որովհետև ապրել մի հասարակութեան մէջ, ինչպէս գեղեցիկ կերպով ասել է մի գիտնական, միշտ չէ նշանակում հնազանդվել, ընկճվել, անհատական աղատութիւնը կորցնել և գերի դառնալ այդ հասարակութեան, ոչ, այլ և չատ անգամ ընդհանուր մակերևոյթից բարձր լինել և կրելով կուրծքի վրա առաջադիմութեան խաչը քարոզել ընկածներին վերականգնումը։

Այո, ազնիւ բարեկամ, այդ այդպէս է։ Բայց լաւ գիտացիր որ մի տգէտ հասարակութիւնն ու առաջադէմ մարդիկը երկար ժամանակ իրարու հետ խառով են լինում։ Վերջինները կամենում են տեսնել, ժառանգել ճշմարիտ մարդկային կեանք հասարակութեան հետ միասին, բայց չեն գըտնում։ Իսկ տգէտ հասարակութիւնը երբէք չէ փնտռում և չի որոնի առաջադէմ մարդկանց։—Մի խակ հասարակութենից ծնուած խառը սերունդները չուտով չեն հաշտվում միմեանց հետ։ Լուսաւոր արեգակը, որ դոցա վրա պիտի փայլէ, դարեր չրջան կատարելու հարկաւորութիւն ունի և այդ սերունդների վրա խաւար ստուէր փռող սարերի ետև է գտնվում։ Դեռ դարերը պէտք է անցնեն, դեռ սարերը պէտք է քանդվեն, կործանվեն։ Ահագին ժամանակ։ Իսկ մարդուս կեանքը կարճ է։

Ներիր, ընկեր, ես փիլիսոփայութիւն չեմ անում։ Այդ տողերը թելադրում են ինձ իմ սիրտը, իմ ուղեղն ու իմ խղճմտանքը։ Ինչ որ գրում եմ՝ տեսնում եմ, շոշափում և զգում եմ ես, ուրիշ ոչինչ։

Գրել այստեղի կեանքի մասին։ Բայց ինչ գրել, ում վրա գրել։—Չը նայելով որ քաղաքիս մեծ մասը հայերն են կազմում, չը նայելով որ նախախնամութեամբ օրհնուած այս մայրաքաղաքը համարեա ամբողջապէս հայերով է ընակեցրած, չը նայելով որ Թիֆլիսը կովկասեան հայերի կեդրոնն է, այնու ամենայնիւ չը կայ այստեղ հայ հասարակութիւն, այս խօսքի բուն և խելացի նշանակութեամբ։ Եւ ինչպէս կարող է լինել, երբ, ինչպէս մեզանում ասում են, «չունը իր տիրոջը չէ ճանաչում», ոչ թէ ընակիչների բազմութեան պատճառով, այլ ազգերի «ամալգամի», հասարակական խառը, անկարգ երևոյթների և ընդհանուր անզգայութեան չնորքով։

Սարսափելի սխալ արած կը լինենք, եթէ մեր քաղաքի հայ հասարակութիւնը խեղճ հայոց ազգի ներկայացուցիչ համարենք։ Գաղթականները մի ազգի բուն ներկայացուցիչ չեն կարող լինել։ Մանաւանդ եթէ դարեր են անցել գաղթականութենից յետոյ։ Ապա հարցնենք այստեղի հասարակութեանը՝ ուր է հայրենի հողը, ինչ է այժմ պատահում այնտեղ, ովքեր և որտեղ են ձեր հայրենակիցները,—չը գիտէ, ոչինչ չէ կարող պատասխանել այդ հարցերին։ Սորա հայրենի երկիրը, ուր ապրում է, սորա սիրելի օրօրոցը, որի մէջ մեծացել է, օտարութիւնն է, իսկ ծծմայրը, որ կաթն է տվել՝ գաղթականութիւնն է։ Օտարութիւն և գաղթականութիւն ահա, բարեկամ, մի հիանալի արձանագիր փորագրուած հայերի բազդի դրան վրա։ Մթթէ Թիֆլիսի հայերը գաղթական ու օտարացած չեն։ Թող հաստատեն հակառակը։ Եւ այժմ, սիրելի՛ երևակայիր, թէ այս հեռացած ու օտարացած՝ հայրենիքին ապերախտ հասարակութիւնը ինչ կը լինի, ներկայացրու քեզ, թէ ովքեր կը լինեն սորա առաջնորդողները, իմացիր, թէ ինչ կը լինի այստեղ կեանքը և հասկացիր, թէ հաստատ ու անդրդուելի բնաւորութիւն չունեցող մարդը, ինչպէս հետզհետէ հաստացնելով իր փորը կարող է փոխվել մի վնասակար քաղաքացու և ընկնել այստեղ թագաւորող անզգայութեան ու անտարբերութեան անդունդը։ Եւ եթէ բուն հայրենիքից մի քանի քայլ հեռու գտնուող հայ հասարակութիւնը այսպիսի է, գուշակիր ուրեմն, թէ ինչ կը լինեն աւելի ու աւելի հեռու գնացածները։

Է՛հ բարեկամ, մեր հոգևորականութիւնն էլ իր եկեղեցով, թէև մի կողմից որպէս թէ յիշեցրել է հայ գաղթականին նորա հայրենիքը, նորա

*) Տես «Մշակ» № 50, 76 տարի։

ԴՎՈՎԻ ՍՈՂՈՄՈՆԻ ԴԱՎԱՅԱՂ

Ա. Ա.

Հայտնի է, որ Դավիթ թագավորը Սաղոմոնի հայրն է եղել։

ցէք. այդ նիւթերը առատ են. ահա դրանցից մի քանիսը իմ կարծիքով։

Հայաստանը բոյսերով լի է. Հայաստանը ծաղիկներով առատ է. նրան երկրային դըրախտի անուն են տեփականացնում։ Դուրս եկէք դաշտը. մտէք անտառը. բարձրացէք սարի գլուխը, ծաղիկներ ժողովեցէք, խոտեր պառեցէք, ցոյց տուէք առաջին հանդիպող շինականին. նա կասի ձեզ դոցա բոլորի անունները, կը մեկնի ձեզ դոցա յատկութիւնները, օգտաւէտութիւնը. թղթի անցրէք այդ ամենը, հետաքրքրուեցէք այդ, ըստ երևոյթին, ընչին առարկաներով, զբաղեցէք դոցա մասին ոչ թէ փիլիսոփայաբար, այլ հասարակ դրչով,—դուք դրանով միջոց կը տաք բանասէրներին մեր ազգային բառարանը հարստացնելու, պատճառ կը լինէք բուսաբանութիւնը մեր ազգային լեզուով կատարելագոյն ուսուցանելու։ Սորանով հաւատացէք, որ քիչ ծառայութիւն արած չէք լինի մեր ազգին ու լեզուին։

Մտէք գիւղացու աղքատիկ խրճիթը, ծանօթացէք նորա անտեսական դրութեան հետ, տեղեկացէք թէ ինչ պայմանների մէջ է գըրուած նորա կենցաղավարութիւնը ու ապրուստը, զբաղեցէք այդ բոլորի մասին մանրամասնաբար և դրանով պատճառ եղէք ուրիշներին միջոցներ գտնելու դուրս հանելու գիւղացուն ուրիշ ճանապարհի վերա, բարեկարգելով նորա աննախանձելի դրութիւնը։ Հաւատացէք այս կերպով մեծ գործ կատարած կը լինէք։

Դիցուք գիւղացու անասունների մէջ ցաւ է ընկնում։ Շինականի կարծիքով Աստուծու այդ պատուհասի մասին հետաքրքրուեցէք. իմացէք նորա պատճառը, սկզբնաւորութիւնը, տեղութիւնը, որպիսութիւնը, յայտնեցէք որ երկիրը մեծ կարօտութիւն ունի անասնաբոյժների. անասնաբոյժները օգնութեան կը հասնեն. ցաւին դարման կանեն։ Համոզուեցէք, որ սորա նման մանրամասն հարցերը գիւղացու համար, «մահու և կենաց» խնդիրներ են։

Պատմեցէք աւելին քան թէ այն, որ պատվել ու ուսել է մինչև այժմ մեղուապահութեան, հաւապահութեան, շերամապահութեան մասին, թէ ինչպէս է վարվում մեղուապահը իւր մեղուների հետ։ ինչու է զուրկ մնում շերամապահը իւր դառն աշխատութիւնից սպասելի օգտից,—և դուք կը տեսնէք, որ կը գտնվեն գիւղատնտեսներ, մտաւորներ ու հետազօտողներ այդ հարցերը։— Հաւատացէք, որ դուք ձեր պարտքը դրանով կատարած կը լինէք։

Եւ քանի՞, քանի՞ այսպիսի խնդիրներ կան լուծելու, քանի՞, քանի՞ հարցեր կան քննելու և վերաքննելու, բայց մեր լրագիրների պատուելի թղթակիցների մեծ մասը կամ այս ինչ ու այն ինչ հոգևորականի վրա են խօսում մեկին գովում, միւսին մարակում են և կամ ուսումնարանական գործը իրանց համար ինչպէս մի ազբիւր են շինած, որ առանց ցամաքելու ու սպառուելու՝ տալիս է նրանց առատ նիւթ. այդ առատ նիւթը ուսուցիչների շուտ շուտ փոփոխուելն է, հոգարարձուների ընտրութիւններն են և սրանց կամայականութիւնից ծագած զանազան որոգայթներն ու ինտրիգները։

Յովհ. Աթանասեանց

«ԽԱԹԱ-ԲԱԼԱ» ՎՐԱՑԵՐԷՆ

Ամսոյս 15-ին Թիֆլիսի Թատրոնում վրաց Թատրոնասէրները ներկայացրին երկրորդ անգամ մի և նոյն բարեգործական նպատակով Գ. Սունդուկեանցի կոմեդիա Թարգմանված հայերէնից։

Առաջին ներկայացումից յետոյ մենք արդէն յայտնեցինք մեր կարծիքը առհասարակ պիեսայի յաջող ընթացքի մասին, իսկ այս անգամ մենք հարկաւոր ենք համարում անել մէկ քանի նկատողութիւն առհասարակ խաղացողների մասին և յոյսով ենք որ պատուելի սիրողները չեն ձանձրանայ լսելու մեր անկեղծ և անկողմնապահ նկատողութիւնը։

Մշակիս առաջին տարուայ գործունէութեան խակ սկզբում, մենք համակրելով վրացիների ներկայացումներին, միշտ տալիս էինք կարճագրոտ տեղեկութիւններ և անկողմնապահ դատողութիւններ այդ ներկայացումների մասին։

Երբ առաջին անգամ մենք տեսանք օր. Կիպիանու խաղը, իսկոյն խոստովանեցինք որ այդ օրիորդի մէջ կայ ձիրք, որ դա իւր կենդանի և շնորհալի խաղով հաղորդիւս դերասանուհի է վրաց Թատրոնի համար։

Մի և նոյն ժամանակ մենք յայտնեցինք մի կարծիք ևս՝ այն է որ պատուելի սիրող դերասանները հարկաւոր է որ հեռու պահեն իրանց այն փտած ձևից որ հայ մարդ ներկայացնելով բեմի վերա, պակասութիւն են համարում հայի վատ վրացերէն խօսելը, և այդ վուլգարական կոմիզմով աշխատում են ծիծաղացնելու հանդիսականներին. Թող, ասում էինք՝ նորա աշխատեն առհասարակ մարդու ընդհանուր պակասութիւնները ծաղրելու և ոչ թէ նորա անձնական պակասութիւնը, այն է վրացերէն վատ արտասանելը։

Այս անգամ ներկայ գտնուելով, շատ ժամանակից յետոյ, վրացերէն ներկայացմանը, մենք ուրախութեամբ նկատեցինք որ մեր յայտնած կարծիքը օրիորդ Կիպիանու, մասին շատ ճիշդ է եղել, որ այդ օրիորդը եթէ կամենար նուիրել իւրեան բեմին, պիտի տաղանդաւոր սիրող-դերասանուհի դառնար։

Մի և նոյն ժամանակ մենք նկատեցինք որ վրաց բեմը մեծ առաջադիմութիւն է արել և գտել է մէկ ուրիշ նմանապէս տաղանդաւոր ոյժ, այն է պ. Կ. Կիպիանուն, օրիորդի եղբօրը։

Պ. Կիպիանին բեմի վերա իւր սենեակումն է, նորա խաղի ձևը, նորա դրիմը, ձայնը,—ամենը ցոյց է տալիս որ նա ճշմարիտ տաղանդ ունի, որ կարող է զարգանալ ապագայում։

Այն ինչ մէկ ուրիշ դարտի մասին, դարձեալ նոր սիրող-դերասան պ. Սարաշիձէի մասին, մենք պիտի ասենք որ թէև կայ նորա մէջ ճշմարիտ ձիրք, բայց հետևելով վրաց բեմի հին, ինչպէս վերևն ասացինք, ձևին՝ ծաղրել հային նորա վրացերէն վատ խօսելու համար, անցնում է երկրորդական պլանը և չէ կարելի զուշակել թէ այդ սիրող դերասանի բեմական գործողութիւնը ինչով կարող է օգտաւէտ լինել բեմին։

Եթէ նա կը հիմնի իւր կոմիզմը հայի վրացերէն վատ խօսելու վերա, այն ժամանակ, մենք կարծում ենք թէ դա շատ ուրիշ օգտաւէտ դերեր չէ կարող մշակել վրաց բեմի համար, այն ինչ նորա մէջ երևում է հաղորդական կոմիկի ձիրքը։

Վերջացնելով մեր նկատողութիւնը, աւելորդ չենք համարում յայտնել նմանապէս որ Մասիսեանցի դերում պ. Դուրամով շատ բնական էր և տուեց այդ դերին բաւական վեհանգամութիւն, այն ինչ այդ դերին կենդանութիւն տալը շատ դժուար է։

Ինչ կը վերաբերի օրիորդ Կիպիանու մասին, թող նորի մեջ սիրող-դերասանուհին նկատել նորան որ Խամիերու դերը յանձն առնելով նա, ինչպէս մենք նկատեցինք, չէր հասկացել նորան, և դրանից է որ այդ նշանաւոր դերը շատ թոյլ անցաւ։ Ճշմարիտ է Խամիերին պիտի շատ-շատ խօսի, բայց ոչ թէ բարկացած, միշտ վրդովուած և սաստիկ կրքով։ Նա շատ շատ խօսում է որովհետև կենդանի և խորամանկ կին է և ոչ թէ կուասէր և չար կին։

Հ.

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

Ապրիլի 14-ին

Շատ դժուար է մի նամակագրի դրութիւնը, երբ նա ուզում է անպատճառ գրել և մի և նոյն ժամանակ գտնվում է Երևանի նման մի մեռած քաղաքում, որտեղ հասարակական կեանքի նըշոյլն անգամ չէ երևում։ Մտածում ես թէ ինչ վեր առնես նամակիդ նիւթ. գրես տեղական երիտասարդութեան վրա—պէտք է ասել, որ նա քիչ բացառութեամբ, թուղթ է խաղում։ Գրես հոգևորականութեան մասին—դա արդէն չափազանց մաշուած նիւթ է, որովհետև այդքան գրուել է դրանց համար, շատ քիչ մխիթարական երևոյթներ են պատահել գրանց կեանքի մէջ, իսկ ես այժմ ոչինչ փոփոխութիւն չեմ գտնում նոցա վերաբերեալ, որ արժանի լինի մի նամակի։ Ուսումնարանների մասին գրես,—կամ պէտք է մի մեծ յօդուած լինի, որ ամբողջ կազմակերպութիւնը քննի, կամ պէտք է ցոյց տաս պակասութիւնները, երևան հանես զանազան հայր-տեսուչների անտաշութիւնը և նամակդ պէտք է անցնի առանց հետևանքի, մինչև անգամ պատասխանի արժանի էլ չեն անի։ .. մեծ մարդիկ են (ձեր ծօրն ողորմի)։ Վաճառականները երկու կարգի են բաժանուել—հներ և նորեր՝ հները նոյն են, նոյն խաբեբաները, նոյն իւրեանց աշխատանքը այս կամ այն մարդու քանդելու վրա հիմնողները, նոյն սաղմոս կարդացողները, մի և նոյն տաճիս աղուհներն են մնացել, իսկ նորերը նոր են նրա համար, որ ծաղրում են հների արժանաւորութիւնները, իսկ իրանք մի և նոյն խմորից են թխուած։ Նորերը մի քանի լրագրական յօդուած կարդալուց յետոյ, այս կամ այն հասարակական գործիչների մտքերը խակ դատողութիւն են անում։ Ակամայ մարդու միտքն է գալիս Կրիլովի «Եշը և ոսկեղը»։ Նորերը իրանց եւրոպացի են անուանում, որովհետև եթէ քէֆ անելու անգամ գնան, պէտք է վիճեն, կուեն, եթէ չը համաձայնես նրանց հետ, իրանց գդակը պատուեն և հեռանան։ Պատմում են, որ այդ վաճառական տիրացուներից մէկը, մի քէֆում կուելուց յետոյ, հեռանալով այդ խմբից մի այլ խեղճ խմբի է պատահում, որոնք խաղաղ անցկացնում են եղել իրանց ժամանակը։ Նա աչքերը երկինք է բարձրացնում և բացականչում. «այս կոպիտ տոխացիները հաչում մնան, իսկ մենք եւրոպարիներս, նորերս կուենք»։ Ուսուցիչներն էլ են մի դասակարգ կազմում, նրանց մասին գրելն էլ չարժէ, այն բեռն էլ նրանց բաւական է, որի տակ ճնչվում են։ Վարժապետ, միթէ արժէ դրանց մասին գրել։ Քան չանես։ Գանք տեղական արիստոկրատիային... 600 այսպեղ պէտք է զոյչ լինել. եթէ ոչ այնպէս կը հուպ տան, որ ոսկորներդ կը ջարդուին... բայց ով է այդ արիստոկրատիան։ Մէկը, օրինակ, հաչում է. եթէ ծառայիս, որ բաւական խելօք է, պաշտօնով բարձրացնեմ, աղջկան համար լաւ փեսացու կը լինի և այդ ծառան հիմա մարդ է դառել, նա արիստոկրատ է, լաւ շոր է հագնում, բարձր գլխարկ է դնում, ձեռնոցներ ունի և եթէ բախտի բերմամբ դրա հետ ծանօթացար, պատահեցիր և գլուխ տուիր, նա այնպիսի ձեով է ձեռքը գլխարկին տանում, այնպէս է ժպտում, որ կարծես Երևանը քեզ բախշեց։ Նրա գլուխ տալն էլ ձև ունի, ժամանակ ունի, նայելով թէ ով է տեսնում։ Եթէ տեսողը մի ազատ վաճառական է, կամ մի ազատամիտ գեղեցիկ կին է, նա գլխարկը բարձրացնում է. եթէ մի հաջիադա է, կամ մութ տեղ է,—նա ձեզ բոլորովին չէ ճանաչում։ Շատ հարկաւոր է. Կուբանն անդամ, ուր միշտ թուղթ են խաղում, և երևանն երևանն միայն պարում են, որ մեծ մասով անբարոյականութիւնով է վերջանում, այդ հասարակական տեղն անգամ բաժանումներ կան՝ մի կողմը բարձր դասը, որ իր շրջանի մէջ ամենն մահկանացու չէ ընդունում, միւս կողմը միջակ մահկանացուները, որ անդադար պարում են, մի կողմն էլ լուռ ու մունջ վաճառականների կանայքն են օռնչում։ Դպրանոցի պատուելի պարոնայք (ես անպատճառ դրանց պատուելի կասեմ, այդ իմ հաշիւն է), հոգարարձուք կանոնաւոր նստեր ունեն, ուսուցիչների ռոճիկները իւր ժամանակին են վճարում (գալխաւորը այդ է), բայց հերթականները դասեր չեն լսում, դրանց ջղում ուսուցիչներն էլ մանկավարժական ժողովներ չունեն—ամէն ընդ ական, առատն ընդ առատան—թէպէտ այն էլ ասենք՝ ինչ մանկավարժական ժողով, երբ բոլորը լուռ են և կամ անպատճառ համաձայնում են տեսչի հետ... թէպէտ այդ չէ էլ պահանջվում։ Էլի ուսուցիչներին մի քարոզ.... Ամենից հանգիստ, անվրդով դարսիկներն են, նրանք երբեք չեն մոռանում նամակի և հաց ուտելու ժամանակը, թէպէտ դրանցից շատ են վախում, բայց դեռ ոչինչ չը կայ։ Այս բոլոր մարդիկը, այս բոլոր խօսող, մանեկող, խաղացող կենդանի մեքենաները միայն մի բանով են հետաքրքրվում՝ պատերազմով։ Ամենքի բերանում այդ խօսքն է, ամեն խօսակցութիւն այդ հարցով է սկսվում և գորանով էլ վերջանում։ Մինչև անգամ մի տատուչ, որ ամեն առաւօտ առաջին դասի կէսին է գնում ուսումնարան և ամենից ուշ է դուրս գալի, որի մշտական առաջին խօսքերը եղել են «բոլոր ուսուցիչները դասատան են թէ ոչ», նա էլ մի անգամ իւր խօսակցութիւնը պատերազմով է սկսել։ Մինչդեռ այս բոլորը այսպէս է, միայն անվրդով իւր պաշտօնին արի, աչքերը բաց հսկում է պօլիցիան։ Ուրիշները թող ասեն, որ փողոցները լաւ չեն պահվում, դա իւր պատճառն ունի, բայց այսպիսի խառն ժամանակ քաղաքը այդպէս հանդիստ պահել՝ դա մի մեծ քաջութիւն է։ Երևանում առաջ անպակաս են եղել դողութիւններ, աւազակութիւններ և այլն, իսկ հիմա բոլորովին ոչինչ երկիրդ չը կայ։ Մինչդեռ Թիֆլիսում աւազակութիւններն անպակաս են, այնպեղ անգամ ութ ամիս է ես բնակվում եմ և ոչինչ չեմ լսել, փողոցներում գիշերուայ ամեն ժամանակ կարելի է մանգալ անցկենալ։ Նորերում մի տուն էին կողոպտել, միայն ինչպէս ասում են, տան ծառաներն են արել, թե չէ կարելի ամենքի տունը մտնել և զարտուղ քաշել։ Որովհետև խօսքս աւազակութեան վրա է, կը պատմեմ հետևեալը՝ Շաբաթ գիշերում, Երևանից եթէ չեմ սխալվում, մօտ 30 վերստ հեռու, սպանեցին Թիֆլիսի հասարակութեան իւր տաղանդաւոր խաղով յայտնի վ. աղարչակ Շահխաթունեանի ծնողներին Օհան Սուլթան Շահխաթունեանին և սրա ամուսնուն։ Պատմում են, որ դա թշնամութիւն էր. ասում են, որ հանդուցեալի լեզուն հանել են և դրան վրա մեխել։ Օհան Սուլթանը կալուածատէր էր, ասում են, որ նա մշտական անբարոյականութիւններ է ունեցել գիւղացիների հետ։

Յ. Տէր-Գրիգորեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄՕՉԱԿԻՑ մեզ գրում են որ ապրիլի 3-ին այնտեղի հայոց և քաղաքային ուսումնարանների ուսուցիչները և վարժուհիները ունէին գրական երեկոյ այս անգամ վրացերէն լեզուով։ «Մխիթարականը մանաւանդ այն է, ասում է մեր թղթակիցը, որ մօզդոկեցիների նման անշարժ կարծված ժողովուրդ սաստիկ ձգտումն և պատրաստականութիւն ցոյց է տալիս այդ տեսակ երեկոներին։ Լաւ կը լինէր եթէ հայ ուսուցիչները բացի այդ տեսակ երեկոներից, հիմնէին և թատրոնական ներկայացումներ էլ, ի հարկէ հայերէն լեզուով, որովհետև քաղաքի բնակիչների բազմութիւնը հայեր են, իսկ հայերից քիչերն են հասկանում վրաց լեզուն»։ Թղթակիցը իր գրութեան վերջում շնորհակալութիւն է յայտնում թէ գրականական երեկոյի մասնակցողներին, թէ պ. Գանջումեանցին, որ ձրիապէս իր տան դահլիճ էր տուել երեկոն կազմելու համար և բացի սարանից յանձն էր առել լուսաւորութեան և այլ մի քանի ծախսեր։

ԱՊՐԻԼԻ 18-ին ԹԻՖԼԻՍԻ Պատմայի նեռոմն ներկայ էին 30 ձայնաւորներ։ Այդ նիստում վերջացաւ քաղաքային նախահաշիվի վերաքննները։ Թէպէտ մենք անցեալ համարներից մինի մէջ յայտնեցինք առաջնորդող յօդուածում մեր կարծիքը մեր քաղաքի ֆինանսական դրութեան վրա, բայց այժմ որովհետև Դումայի մէջ վերաքննութենից յետոյ նախահաշիվը կրեց բաւական նշանաւոր փոփոխութիւններ և ոսացաւ այլ կերպարանք,—այդ պատճառով մենք դարձեալ կը խօսենք նախահաշվի մասին մեր հետևեալ համարներից մինի մէջ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱ

ԶԷՄԼԻՆից հեռագրով հաղորդում են որ Թիւրքիան դիտաւորութիւն ունի անցկացնել

ՅՈՒՅՍ ԱՌԱՎՈՏԻ

Ամենայն ինչ ի Քրիստոս Յիսուսի Տեառնէ մերում։

Ամենայն ինչ ի Քրիստոս Յիսուսի Տեառնէ մերում։